

ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 54/1

11 դեկտեմբերի 2012թ.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը, ուսումնասիրելով Ա/Ձ Գոհար Մխիթարյանի 20.11.2012թ-ի դիմում-բողոքը (մուտք ՀՀ ԿԱ ՊԵԿ 20.11.2012թ. թիվ 13101-12) և վերջինիս առնչվող նյութերն ու ապացույցները, եկավ եզրակացության, որ դիմում-բողոքի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 23.11.2012թ-ի թիվ 1102356 հանձնարարագրի համաձայն Ա/Ձ Գոհար Մխիթարյանի մոտ կատարվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում, որն ընդգրկել է 07.02.2012թ-ից մինչև ստուգման ավարտն ընկած ժամանակաշրջանը: Արդյունքում, 27.11.2012թ-ին կազմվել է թիվ 1102356 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել 300.000 դրամ:

Ա/Ձ Գոհար Մխիթարյանը 20.11.2012թ-ին ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե է ներկայացրել դիմում-բողոք վերոգրյալ ստուգումն իրկանացրած պաշտոնատար անձանց գործողությունների դեմ: Որից հետո ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե ներկայացված 05.12.2012թ-ի գրությամբ Ա/Ձ Գոհար Մխիթարյանը բերել է միջնորդություն, որով խնդրել է, որպեսզի վերոգրյալ 20.11.2012թ-ի դիմում-բողոքը թողնվի առանց քննության:

<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին կետի <բ> ենթակետի համաձայն. <Դիմումով հարուցված վարչական վարույթը կարճվում է, եթե դիմողը գրավոր ձևով հրաժարվում է իր դիմումից>:

Հանձնաժողովը, ղեկավարվելով <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին կետի <բ> ենթակետի դրույթներով, գտնում է, որ Ա/Ձ Գոհար Մխիթարյանի 20.11.2012թ-ի դիմում-բողոքի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը ենթակա է կարճման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

Ա/Ձ Գոհար Մխիթարյանի 20.11.2012թ-ի դիմում-բողոքի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը կարճել:

Հանձնաժողովի նախագահ՝



S.ԲԱՐՍԵՂՅԱՆ